ԱՆԽՈՆՋ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Ա. Մ. Ինճիկյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

Բանասիրական գիտությունների դոկտոր Արամ Մկրտչի Ինճիկյանը, որի ծննդյան 60-ամյակը մեր գիտական ու գրական հասարակայնությունը նշեց ընթացիկ տարում, ժամանակակից հայ բանասիրության ու գրականագիտության հեղինակավոր դեմքերից ու բազմաշխատ մշակներից մեկն է և իր բարձրարժեք հետազոտություններով լուրջ ավանդ է մուծել նոր ու նորագույն շրջանի հայ գրականության պատմության, տեսության և բնագրաքննության (տեքստաբանության) մարզերում:

Ա. Ինճիկյանը դասական հայ բանասիրության պատկառազդու դեմքերի՝ Գ. Տեր-Մկրտչյանի, Ստ. Մալխասյանցի և Հ. Մանանդյանի հայրենակիցն է, ծնված 1910 թ. դեկտեմբերի 29-ին, Ախալցիխայում, մի գերդաստանում, որն ունեցել է բնության, քնարերգության ու ծաղկի մեծ պաշտամունք:

Սկզբնական կրթությունը նա ստացել է հայրենի քաղաքում, հետո մանկավարժական աշխատանքով պարապել՝ զուգահեռաբար ստանալով նաև բարձրագույն կրթություն:

Վաղ տարիներից է ծնվում Ինճիկյանի մեջ սերը դեպի հայ քնարերգության հրսկաների՝ Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը: Այդ սերն էլ, դեռ 20-ական թթ. վերջերին, նրան տանում է Դսեղ, ուր ուսուցչություն է անում և ուսումնասիրում մեծ լոռեցու կյանքն ու գործը, հետևելով այն իմաստուն խոսքին, թե գրողին լավ ճանաչելու համար պետք է լինել նրա հայրենիքում: Դսեղն էլ կանխորոշում է Ինճիկյան-գրականագետի ապագա հետազոտությունների հիմնական ոլորտը՝ թումանյանագիտությունը: 1933-ին հաջողությամբ ավարտելով Երևանի մանկավարժական ինստիտուտի լեզվի և գրականության ֆակուլտետը, Ինճիկյանն իրեն նվիրում է գիտամանկավարժական գործունեության, դադար տալով միայն ֆիննական կոիվների և Մեծ հայրենականի տարիներին, երբ ուրիշ շատերի հետ, զենքը ձեռքին, մարտնչում էր հանուն հայրենիքի:

1946 թ. առ այսօր Ա. Ինճիկյանն աշխատում է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում նախ՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1958-ից՝ նույն հաստատության տեքստաբանության բաժնի վարիչ:

Արամ Մկրտչի Ինճիկյանի գործունեությունը հայ նոր գրականության պատմու-

թյան բանասիրության բնագավառում ընդգրկում է ավելի քան երեք տասնամյակ:

Նրա գրչին են պատկանում հայ դասական գրականության ականավոր ներկայացուցիչներին նվիրված մի շարք մենագրություններ և հետազոտություններ (Այվազովսկի, Ալիշան, Պատկանյան, Նալբանդյան, Պեշիկթաշլյան, Շահազիզ, Տատուրյան, Թումանյան, Իսահակյան, Միսամանթո և ուրիշներ): Հատկապես նշանակալի է Ինճիկյանի ավանդը Նալբանդյանի, Թումանյանի և Իսահակյանի կյանքի ու ստեղծագործության գիտական ուսումնասիրության բնագավառում: «Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությամբ» (1954) Ինճիկյանը դրեց հայ մեծ հեղափոխական-դեմոկրատի գիտական կենսագրության սկիզբը: Նրա այդ աշխատությունը, միաժամանակ, տարեգրության ժանրի առաջին և, ըստ ամենայնի, հաջողված փորձն է հայ իրականության մեջ, որ արժանացավ գրական-գիտական հասարակայնության բարձր գնահատությանը և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության շնորհակալագրին:

Ինճիկյանի գրականագիտական լուրջ հետազոտություններից է նաև «Թումանյանի գեղարվեստական արձակը» (1937), բայց հայ ազգային մեծ բանաստեղծի գրական ժառանգության ու կենսագրության մարզում նրա կատարած երկարամյա հետազոտությունների հանրագումարն եղավ «Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմությունը» ծավալուն մենագրությունը (1969), որ գնահատվեց որպես թումանյանագիտության վերջին, կարևորագույն նվաճումներից մեկը:

Բարձր գնահատության է արժանի Ինճիկյանի վաստակը նաև Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ուսումնասիրության մարզում: Նրա մենագրությունները՝ լույս տեսած 1940 և 1955 թթ. (վերջինս թարգմանվել է նաև ռուսերեն՝ 1956 թ.) նյութավոր դասվում են հայ մեծ բանաստեղծին նվիրված լավագույն աշխատությունների շարքը:

Ինճիկյանի հետազոտությունների մի նշանակալի մասն էլ նվիրված է հայ գրականության պատմության կարևորագույն պրոբլեմների քննությանը: Դրանցից պետք է հիշատակել «Արա Գեղեցիկի առասպելը և նրա գրական մշակումները» (1946 թ., տպագրված է 1967 թ.), հայ նոր գրականության սկզբնավորման խնդիրներին նվիրված ներածական ուսումնասիրությունը, ուր հանգամանորեն վերլուծվում է 18-րդ դարի վերջին քառորդի և 19-րդ դարի առաջին կեսի գրական պրոցեսը (այդ աշխատանքը տպագրվել է «Հայ նոր գրականության պատմության» առաջին հատորում, 1961-ին):

Հայ նոր գրականության մեջ ազգային-ազատագրական շարժման արտացոլման պրոբլեմին նույնպես անդրադարձել է նա «Խափայել Պատկանյանի և 1850—1880-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժումների գնահատության շուրջը» հետազոտության մեջ (1961) և Ռ. Պատկանյանի երկերի գիտական հրատարակության առաջին հատորի առաջաբանում (1963):

Ինճիկյանի գիտական գործունեության մի կարևոր բնագավառը կազմում է հայ դասական գրողների երկերի ժողովածուների գիտական հրատարակությունը: Նրա անվան հետ են կապված մի շարք հայ դասականների՝ Նալբանդյանի, Թումանյանի, Պատկանյանի, Պողոշյանի, Իսահակյանի և այլոց երկերի գիտական հրատարակությունները:

Ինճիկյան բանասեր-գրականագետի եզրակացությունները ու ընդհանրացումները խարսխված են պատմա-գրական, փաստական հարուստ նյութի վրա, գիտակցությունով հիմնավորված են, խորապես համոզիչ: Դրանով էլ պայմանավորված է այն բարձր հեղինակությունը, որ նա վայելում է գրական և գիտական հասարակայնության մեջ:

Ցանկանք վաստակաշատ գիտնականին երկար տարիների ստեղծագործական արդյունավետ կյանք: